

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԵՐԹԱԿՈՒՄՆԵՐ

Հ. Ս. ՍԻՆԵՂՅԱՆ

ՊԱՏԿԱՆՅԱՆԻ ԵՎ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՄՏԵՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին ծանոթություն և հանդիպումներ

Ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականությունը հարուստ է գրողների բարեկամության փաստերով: Բավական է հիշել դրանցից մի քանիսը, ինչպես օրինակ՝ Գյոթե—Շիլլեր, Մերիմե—Տուրգենև, Չեխով—Գորկի, Ֆլոբեր—Տուրգենև, Թումանյան—Աղայան, Նար-Դոս—Ծատուրյան և վերջապես՝ Պատկանյան և Սունդուկյան:

Ցավոք սրտի մինչև օրս առանձին ուշադրության չի առնվել հայ գրականության երկու խոշոր դեմքերի՝ Ռ. Պատկանյանի և Գ. Սունդուկյանի բարեկամության հարցը: Պատկանյանը ոչ մի գրողի հետ այնքան մոտ չի եղել, որքան Սունդուկյանի: Բազմաթիվ նամակները, հեռագրերն ու ընծայականները, ջերմ մականգրություններով միմյանց նվիրած գրքերն ու նկարները, ինչպես նաև հանդիպումները ցույց են տալիս, թե ինչպիսին է եղել դրամատուրգի և բանաստեղծի բարեկամությունը: Նրանց, ամբողջ կյանքում ուղեկցել է փոխադարձ վստահության ազնիվ զգացումը: Թեև նրանք ապրել են տարբեր վայրերում (Պատկանյանը Նոր-Նախիջևանում, Սունդուկյանը՝ Թիֆլիսում), միմյանցից հեռու, բայց սրտով ու գործունեությամբ կապված են եղել իրար: Նրանց ապրած ժամանակաշրջանը, կյանքի հրատապ հարցերը՝ շատ բաներով մոտեցնում էին գրողներին:

Հետաքրքրական է այն հարցը, թե Պատկանյանը և Սունդուկյանը առաջին անգամ երբ և որտեղ են միմյանց հանդիպել: Այդ մասին մեր տրամադրության տակ ուղղակի փաստեր չկան և ստիպված ենք, հենվելով երկուսի կենսագրական տվյալների վրա՝ ենթադրություններ անել: Հավանաբար երկու գրողների ծանոթությունը սկսվել է 1850 թ.:

Հայտնի է, որ Սունդուկյանը 1850 թ. ավարտելով Ս. Պետերբուրգի համալսարանը՝ վերադառնում է Թիֆլիս և ստանձնում գրագրի պաշտոն: Միև-

1 Նրկու գրողների փոխհարաբերության խնդրով զբաղվելիս մեր ուշադրությունը դրավեց նաև հետևյալ փաստը: Հայտնի է, որ Ռ. Պատկանյանի մայրը՝ Գ. Պատկանյանի կինը սերում էր հաշտարխանցի Սունդուկյան տոհմից: Այդ մասին է վկայում հետևյալ մեջբերումը Գարրիևի ավագ քահանայի Պատկանյանի ինքնակենսագրությունից, տպված «Արաքս», 1889, դիրք 1-ին, էջ 95—108, նրա մահվան կապակցությամբ. «Նույն թվականի [1825], սեպտեմբերի 25-ին, Գարրիևը Պատկանյան ամուսնացավ Նղիսարեթ Մելքոնյան Սունդուկյանի հետ, որից ունեցավ ինն զավակ: Ա. Նրիցյանը Գ. Պատկանյանի ինքնակենսագրությունը գրելով՝ հիշատակում է. «...Գարրիևը սարկավադն արդեն ամուսնացած էր Հաշտարխանցի Սունդուկյան Մելքոնի Նղիսարեթ դստեր հետ...» («Արձագանք», 1889, № 15, էջ 227): Արդյոք դրամատուրգի՝ տոհմի մասին է խոսքը, թե ոչ, միզ համար դեռևս պարզ չէ: Ենթադրում ենք, որ կարող է լինել Սունդուկյանի նախնիներից մեկը:

նույն ժամանակ նա երկրաչափության դասեր է ավանդում ներսիսյան դրպորոցում: Այս մասին ներսիսյան դպրոցի պատմությանը նվիրված իրենց աշխատություններում չեն հիշատակում ո՛չ Ալ. Երիցյանը և ո՛չ Ստ. Մալխասյանը: Մինչդեռ Ե. ա. ք. Գեղամյանը՝ Պետրոս Շանշյանի կենսագրության մեջ այդ մասին խոսում է առանց վերապահության և Սունդուկյանի անունը հիշատակում նրանց շարքում, ովքեր «առանց ոռճկի՝ ձրի էին պարապում, ազգասիրաբար»²:

Գ. Սունդուկյանն այդ պաշտոնին մնում է մինչև 1852 թ. մայիս ամսի վերջը: Դրամատուրգի արխիվում պահպանված է նրան դպրոցից արձակելու մասին, Հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձության նույն թվականի մայիսի 31-ի պաշտոնական գրությունը, ուր ասված է. «...Ըստ նոր փոփոխութեանց կառավարութեանն ուսումնական մասին դպրոցիս հարկաւոր հարմարեցաւ ի՛տեղի ոմանց ի գիտութեանց կարգել զառաւել հարկաւորագոյնս, վասն և հոգաբարձութիւնս ոչ վստահեցեալ այլևս տալ Ձեզ աշխատութիւն շարունակելու, և դասատութիւն Ձեր ի դպրոցիս, այսու յայտնէ Ձեզ զիրն լիակատար շնորհակալութիւն վասն արդիւնաւոր վաստակաց Ձերո, և խնդրէ մի խնայիլ ձայն, եթէ յետ ժամանակի իրիք վերստին հրավիրեսցէ զՁեզ»³:

Հայտնի է նաև այն փաստը, որ նույն՝ 1850 թ. Մոսկվայի Լազարյան ճեմարանից Թիֆլիս է գալիս Ռ. Պատկանյանը և մնում համարյա երկու տարի: Նա նշանակվում է «ստորին դասարաններում ուսուցիչ ուսուաց լեզվի և վերակացու աշակերտաց» ներսիսյան դպրոցում, որի տեսուչի պաշտոն էր վարում հայրը՝ Դ. Պատկանյանը⁴: Միևնույն ժամանակ նա օգնում է հորը՝ «Արարատ» շաբաթաթերթի հրատարակության գործում: Բնական է, որ և՛ Սունդուկյանը, և՛ Պատկանյանը միաժամանակ պաշտոնավարելով միևնույն դպրոցում, չէին կարող ծանոթ չլինել:

Պատկանյանի և Սունդուկյանի երկրորդ հանդիպումը մեր ունեցած տեղյակներով, տեղի է ունեցել 1873 թ., երբ նրանք ճանաչված գրողներ էին, մեկը «Պեպոն» և մյուսը «Արաքսի արտասուքի» հանրահայտ հեղինակներ: Դա՛ Ռ. Պատկանյանի դեպի Թիֆլիս կատարած երկրորդ ճանապարհորդության ժամանակ էր:

Սունդուկյանի հետ իր այդ հանդիպման մասին Պատկանյանը հիշատակում է 1879 թ. ճանապարհորդական տպավորություններում, նշելով, որ այն ևղել է շատ ջերմ, քան մեզ հայտնի երրորդ հանդիպումը (1879): «Այս անգամ, չգիտեմ ինչ պատճառով, պ. Սունդուկյանցի (ականավոր թատերաբեմական հեղինակի) հետ մոտիկ հարաբերություն չունեցա, վեց տարի առաջ այդպես չէր. այն ժամանակ մենք մեկգմեկու ավելի սիրում էինք... գուցե ինձ միայն այդպես երևաց, գուցե այդ մի պատահմունք էր, գուցե, գուցե... բայց ինչ սուտ ասեմ, իմ սիրտը թխոր մնաց»⁵: Իսկապես, այդ միայն «պատահմունք» էր, այդ միայն թվացել էր բանաստեղծին, իրականում, նրանց բարեկամությունը գնալով ավելի ամրապնդվում էր:

2 «Գործ», 1917, № 1, էջ 43:

3 Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Գ. Սունդուկյանի արխիվ, № 14—4:

4 Ա. Երիցյան, Պատմություն 75-ամյա դպրության ներսիսյան հայոց հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1898, էջ 488:

5 Ռ. Պատկանյան, «Փորձ», 1879, № 11, էջ 118:

Բարեկամները հանդիպում են նաև 1880 թ., երբ ուղևորվելով դեպի Հայաստան, հուլիսի 28-ին (ն. տ. օգոստոսի 9-ին) Ռ. Պատկանյանը դալիս է Թիֆլիս⁶:

Պատկանյանը և Սունդուկյանը հանդիպումներ են ունենում նաև 1887 թ., հանքային ջրերում: Այս հանդիպումների մասին կան բավական հետաքրքիր տեղեկություններ թե՛ նրանց նամակներում, թե՛ Պատկանյանի «Հայ ուխտավորի նամակներ» ուղեգրությունում: Ահա ինչ է գրում Պատկանյանը. «Հազիվ թե ոտքս ճակատաբեկ վայր էի դրել և ուզում էի պայուսակս մի կառքից մյուսը տանել (ճանապարհս մտադիր էի շարունակելու դեպի էսենտուկ և Թթու-ջուր). հանկարծ մոտիցս մի մարդ անցավ (գլխուն կապուտ մորթիի գդակ հագած), որի երեսատիպարքը, ասես թե, շատ ծանոթ էր ինձ: «Սունդուկյան, դո՛ւն ես», հարցուցի: Մի ականթարթ շէր անցել, որ մեր հռչակավոր հեղինակին եղբայրական գորովով կրծքիս սեղմեցի: Հազիվ երեք-չորս րոպե ազատ միջոց ունեի, ահա այդ րոպեններից օգուտ քաղելով իրար թուուցիկ լուրեր հաղորդեցինք—ես Սունդուկյանին նախիջևանի և նա ինձ Թիֆլիսի մասին»⁷:

Նույն ուղեգրության մեջ Պատկանյանը մեծ հուզմունքով է պատմում Տաք-ջրում Սունդուկյանի հետ անց կացրած մի ամբողջ օրվա մասին. «...Շատ բաների և շատ մարդոց վերա խոսեցանք, իրար շատ նոր լուրեր հաղորդեցինք, ես իմ տեղի և նա Թիֆլիսի մասին, իսկ մեծավ մասամբ մեր զրույցների նյութը առնում էինք մեր սրտերեն, քան թե իրական աշխարհքի: Կարճ՝ Սունդուկյանը և ես միասին անցուցինք մին այն օրերից, որոնց տպավորությունը շուտ չի փարատվում մարդու սրտից»⁸:

Իսկ ինչի՞ մասին էին զրուցում հայ գրականության երկու ականավոր ներկայացուցիչները. ի՞նչ հարցերի շուրջն էին ծավալվում նրանց սրտաբուխ զրույցները: Բնական է, որ նրանց առաջին հերթին պետք է զբաղեցնեին ժամանակի հայ առաջավոր մտավորականությունը հուզող հայ ժողովրդի ազատագրության խնդիրը՝ Թուրքիայի ճիրաններից: Արդեն տեղի էր ունեցել Բոսլինի տխրահռչակ վեհաժողովը և նրանից ակնկալված հույսերը խորտակվել էին: Ի՞նչ էր սնում անել: Հուսահատվե՞լ: Ո՛չ: Պետք է շարունակել պայքարը, երբեք չկորցնելով հույսը,—մտածում էին բարեկամները:

Երկու բարեկամների հանդիպման արդյունքն է Պատկանյանի «Սրտի վկայություն» բանաստեղծությունը: Այս առիթով կա շատ ուշագրավ մի փաստ: 1887 թ. դեկտեմբերի 20-ի նամակով Պատկանյանը այդ բանաստեղծության մի ինքնագիր օրինակը ուղարկելով Սունդուկյանին, հիշեցնում է դրա մտահղացման շարժառիթը. «Մի՞տդ է այն օր դու ու ես ինչեր խոսեցանք: Այն օրվա խոսակցության արձագանքը ահա ուղարկում եմ քեզ այսօր... Այս ոտանավորս կարծեմ վատերիցը չէ: Յանկալի էր, որ մեր աճող սերունդը զարգանար և տածվեր ավելի հուսալի գաղափարներով: Վայ-վազլախը և անձնա-

6 «Մշակ», 1880, № 132: Պատկանյանը Թիֆլիս է եկել նաև 1889 թ. («Արձագանք», 1889, № 31, էջ 465) էլ միաժին ճանապարհորդելիս և անկասկած է, որ նրանք հանդիպել են նաև այդ ժամանակ:

7 Ռ. Պատկանյան, «Արձագանք», 1887, № № 25, 26, 29, 37, 41:

8 Նույն տեղում:

մտրակությունը բավականին վնասներ հասցրեց ազգիս, տվե՛ց արդյոք մի որևիցե շահ, Լերկբայելի է»⁹։

Այդ զրույցների ժամանակ է Սունդուկյանը մտահղացել իր «Ամուսիններ» պիեսի կերպարներից մեկը (ըստ Լեոնիդին Արտաշեսը), որի մասին վկայում են Շիրվանզադեի՝ 1888 թ. հոկտեմբերի 27-ին Ռ. Պատկանյանին գրված նամակի հետևյալ տողերը. «Երեկ մեր գրականության արեգարդ նահապետը, ինչպես Դուք անվանեցիք նորան Ձեր ճանապարհորդական հիշողությունների մեջ, ինձ պատիվ էր արել յուր այցելությանմբ։ Երբ խոսք բացվեց յուր նոր պիեսայի մասին, և Լերկ ևս ասացի, թե պատրաստվում եմ Ձեզ նամակ գրելու, խնդրեց գրել, որ «Ամուսիններ» պիեսայի տիպերից մեկը ստեղծել է Ձեր խորհրդի համեմատ (Պատիվգործություն տված)»¹⁰։

Զրույց նամակներով

Թե ուրիշ ի՞նչ հարցերի շուրջը կարող էին զրուցել բարեկամները, առանց փաստերի դժվար է կոնկրետ դատողություններ անել. այդ պատճառով դիմենք նրանց հեռակա զրույցների՝ նամակների օգնությանը։

Պատկանյանի և Սունդուկյանի միջև նամակագրությունը սկսվել է 1880 թ., բանաստեղծի՝ նույն թվականին Թիֆլիս կատարած այցելությունից հետո։ Առաջին նամակը գրել է Պատկանյանը 1880 թ. սեպտեմբերի 29-ին։ Այնուհետև բարեկամների նամակագրությունը շարունակվել է մինչև բանաստեղծի մահը։ Գրականության և արվեստի թանգարանում պահպանվում են Ռ. Պատկանյանի, Գ. Սունդուկյանի և նրանց հարազատների միմյանց գրած թվով 47 նամակները և հեռագրերը։ Դրանք սլատմում են երկու բարեկամների փոխադարձ ջերմ սիրո ու հարգանքի, թե՛ առօրյա հարցերի և թե՛ կյանքի խոշոր իրադարձությունների նկատմամբ նրանց ունեցած հայացքների մասին։ Նամակներով նրանք միմյանց ուղարկում են իրենց նոր ստեղծագործությունները, կարծիքներ փոխանակում, սրտաբաց խոսում տարբեր հարցերի շուրջը, իրար պատմում իրենց ուրախություններն ու վշտերը. «Նոր շատ բաներ ունեմ ասելու և ինչքան ուրախ կլինեի սիրտս դարդակելու, բայց... խոսքերս խեղդում են ինձ...» — գրում է մի առիթով Սունդուկյանը¹¹։

Նամակներում նրանք խոսում են ժամանակի հայ մամուլի և գրողների փոխհարաբերության, գրաքննության՝ հաճախ դաժանության հասնող խրատությունների, Արևմտահայաստանի վիճակի և այլ բազմաթիվ հարցերի մասին, որոնց կանդրադառնանք քիչ հետո։

Գ. Սունդուկյանը և Ռ. Պատկանյանը տարբեր առիթներով պարբերաբար վեճեր են ունեցել «Մշակի», «Մեղու Հայաստանի», «Նոր-Դարի» խմբագրությունների հետ։ Դրանք առիթ են տվել բարեկամներին՝ իրենց «սրտերը բացել միմյանց»։

Հայտնի է, որ մինչև 1880 թ. Սունդուկյանը աշխատակցում էր «Մշակին», թեև շատ հարցերում նրա և Գրիգոր Արծրունու հայացքները չէին համընկ-

9 Հայկական ՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարան, Ռ. Պատկանյանի ֆոնդ, № 270, էջ 464։

10 Նույն տեղում, ֆոնդ № 914։

11 Գ. Սունդուկյանի ֆոնդ, № 67—2։

նում: 1880 թ. վերջնականապես ընդհարվելով Արծրունու հետ, Սունդուկյանը սկսում է աշխատակցել «Փորձին»: Այդ նույն ժամանակ Արծրունու հետ ընդհարված էր և Պատկանյանը, որը 1880 թ. հոկտեմբերի 18-ին՝ Սունդուկյանին ուղարկած նամակում քննադատում է «Մշակը» ու նրա ուղղությունը: Լինելով տաքարյուն և տևողի տալով Թիֆլիսի ու Պետերբուրգի իր բարեկամների հրահրումներին և ավելի բոբբովելով Արծրունու դեմ, Պատկանյանը որոշում է մի կատակերգություն գրել նրա մասին (որին տալիս է «Աստառ» խորագիրը): Թիֆլիսի նրա բարեկամները, որոնց թվում և Սունդուկյանը, խոստանում են բեմականացնել պիեսը, «բեմական կերպարանք տալ «Աստառին»: 1880 թ. նոյեմբերի 8-ի նամակում Պատկանյանը Սունդուկյանին գրում է. «Աստառ» կոմեդիան գրեթե ավարտեցի... քեզ կուղարկեմ, որ թատրոնի հարմարեցնես, ինչպես պայմանվել էինք: Չգիտեմ լավ է, թե վատ. բայց մեջը սպանիչ շատ թույն կա»: Պիեսն ավարտելուց հետո Պատկանյանը այն ուղարկում է Պետերբուրգի բարեկամներին, որոնք անհամբեր սպասում էին: Այնուհետև նա խընդրում է Սունդուկյանի միջնորդությունը «Աստառը» «Փորձում» տպելու համար, սակայն այն ո՛չ «Փորձումն» է տպվում և ո՛չ բեմ բարձրանում, քանի որ հեղինակն ինքը հետագայում փոխում է իր մտադրությունը և արգելում «Աստառի» տպագրությունը:

Պատկանյանի և Սունդուկյանի նամակներում խոսվում է նաև «Մեղու Հայաստանի» և նրա խմբագրի մասին: Հայտնելով իր ցանկությունը աշխատակցել «Մեղվին», Պատկանյանը գտնում է, որ «Մեղուն» պետք է մի փոքր փոխի իր ուղղությունը և վերջ դնի «Մշակի» և Արծրունու հետ անսպասակ բանավեճին: Բանաստեղծը դժգոհ է «Մեղվի» խմբագրից: Սունդուկյանը Պատկանյանին գրում է, թե «Մեղվի» խմբագրությունում շատ են ափսոսում, որ պ. Սյուլուկը¹² ոչինչ չէ կամենում գրել իրենց»: Այդ առթիվ բանաստեղծը տարակուսանք է հայտնում՝ մի՞թե «Մեղվին» կարող են հետաքրքրել իր հոգվածները, քանի որ մինչև թերթը որևէ բան տպում է, հարուցած խնդիրը վաղուց կորցնում է իր նշանակությունը և հոգվածը մտնում է «ի շարս ջրալի հոգվածներին»¹³: Պատկանյանին վիրավորում է Պ. Սիմոնյանցի անհարգալիք վերաբերմունքն իր հոգվածների և կարծիքների նկատմամբ: Պարզ երևում է, որ խմբագրի և բանաստեղծի ընդհարման պատճառը եղել է գրական-հասարակական որոշ խնդիրների նկատմամբ նրանց տարաձայնությունը: «Ահա ես շուտով պիտի հարուցանեմ խնդիր Արվեստաց դպրոցների, որին հակառակ եմ ճանաչում Պետրոսին, որն այդքան ոտնատակ արավ այդ օգտավետ ձեռնարկը և գաղափարը: Ես էլ խոմ այս բոպեիս խելքով մտքով և բոլոր մարդկային ընդունակություններովս, մոլորանդաբար անձնատուր եմ եղած այդ գաղափարին... Ուրեմն ի՞նչ եք կարծում, մի՞թե կարող եմ այդ հոգվածներն «Մեղվի» մեջ զետեղել և ի՞նչ սրտով պիտի հյուրընկալի Պետրոսը այն գաղափարներն, որոնք քանի մի ամիս առաջ ինքը հալածել և նսեմացրել էր...»¹⁴, — գրում է Պատկանյանը:

¹² Այս ծածկանվամբ Ռ. Պատկանյանը հանդես է եկել նաև «Մեղու Հայաստանի»-ում:

¹³ Ռ. Պատկանյանի ֆ., № 270, էջ 442:

¹⁴ Նույն տեղում:

Նամակներից պարզվում է նաև մի կողմից Սունդուկյանի և Պատկանյանի մյուս կողմից «Նոր-Դարի» խմբագրի հայացքները: Հայտնի է 1883 թ. այդ թերթի սկսած հալածանքը՝ Պատկանյանի դեմ: Լայն ասպարեզ տալով հակառակորդների զրպարտչական հոդվածներին, Պատկանյանին մերժվում էր նրանց պատասխանելու իրավունքը: Պատկանյանի համար ստեղծված էր խիստ ծանր կացություն և այդ պայմաններում նա նորից դիմում էր Սունդուկյանի բարեկամական օժանդակությանը:

* * *

Այստեղ հարկ ենք համարում հատկապես կանդ առնել ցարական դրաքննության՝ Պատկանյանի և Սունդուկյանի երկերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի հարցի վրա: Քիչ է ասել, թե վերջինս բարյացակամ չէր տրամադրված դեպի Սունդուկյանը, հատկապես և Պատկանյանը: «Անգույն ողջնեցը» կապանք էր դնում գրողների գրչին, աղճատում նրանց մտքի լավագույն արդյունքները կամ երբեմն էլ բոլորովին մերժում տպագրությունը՝ ամենաանմեղ ստեղծագործություններում անգամ հաճախ փնտրելով չարիք՝ կառավարության նկատմամբ: Բարեկամներին մնում էր իրենց զայրույթը արտահայտել գրած նամակներում կամ զրույցներում՝ հանդիպումների ժամանակ: Նրանք գիտեին, որ բարձրաձայն բողոքել չեն կարող: Ահա ինչ է գրում Սունդուկյանը՝ Պատկանյանին, վերջինիս բանաստեղծությունը զրաքննության կողմից արգելվելու առթիվ. «Այս բոպեիս ստացա Ձեր երրորդ բանաստեղծությունը՝ որով բոլորովին հափշտակեցիք սիրտս և հոգիս, բայց ցավոք սլետք է հայտնեմ Ձեզ, որ նորան ևս սպասում է ցենզուրայի կողմից նույն վիճակը, որին ենթարկվեցան և առաջին երկուսը, այսինքն ոչ մինի տպելը հնարք չկա:

Ահա մեր ճակատագիրը՝ մեզ հալածում են, մեզ տանջում, մեր կաշին պոկում, կյանքը խլում և մեկ բառ անգամ արտասանելու իրավունք չեն տալիս:

Ինչ արած, բողոքիր և բողոքիր սրտիդ մեջ ինչքան կամենաս, բայց լեզուդ չհամարձակի շարժիլ»¹⁵:

Ցարական գրաքննության դաժան հալածանքը հայ գրականության, և մասնավորապես իր՝ Պատկանյանի նկատմամբ, բանաստեղծի մեջ առաջ է բերում խոր ցասում: Նա հիշեցնում է, որ անգամ նիկոլայ կայսեր օրոք, որ ցենզուրայի ամենախիստ ժամանակաշրջանն էր, Կոնիովը գրեց իր առակների մեծ մասը, իսկ իրեն... թույլ չեն տալիս 2—3 տողով իր անձը պաշտպանել: «Ո՞ր ենք մենք կենում, ե՞րբ ենք մենք կենում,—շարունակում է բանաստեղծը,—մեր թագավորը խոմ Иван Грозный-ը չէ... Դիցուք թե, վերջապես, ես դրրվում եմ ի շարս այն մարդոց (թեև այդ հավանական չէ, վասնզի այդպիսի վեհ պատվի ես բնավ արժանի չեմ), որոնց գրվածքը տերության որևէ հաշվով հրատարակման համար անհարմար է դատված, ինչպես զօրինակ Սուլթիքով-Շչեդրին, Հերցեն, երբեմն Օսթրովսկի և այլն, թեև շատ ցավալի է այդպիսի վիճակը, բայց գոնե նորա մեջ այն մխիթարությունը կա, որ այսպիսի անձանց վրա չարախոսելն ևս ընդամին արգելված է լինում սովորաբար. բայց ես, տարաբախտաբար, այդ մխիթարությունն ևս զրկված եմ շնորհոգ Թիֆ-

¹⁵ Գ. Սունդուկյանի ֆոնդ, № 70—2:

լիսի ցենզորին, ինձ ամեն սրիկա լիաբերան հիշոցում է, իսկ ես գրիչս ձեռք առնելու իրավունք չունիմ»¹⁶:

Պատկանյանը խնդրում է իր բարեկամին՝ անպայման տեսնվել և խոսել գրաքննիչ Մելիք-Մեհրաբյանի հետ: Սունդուկյանը իր պատասխան նամակում հայտնում է, որ գործին օգնելու ոչ մի հնար չկա, քանի որ դրվածքների տպագրությունն արգելված է «կոմիտեի ընդհանուր ժողովի օրագրությունով»: Նա խորհուրդ է տալիս դիմել Պետերբուրգի գրաքննչական գլխավոր վարչությանը. գուցե այնտեղ այդքան խիստ չվարվեն:

Բարեկամներն իրենց նամակներում արծարծել են նաև մանկավարժական խնդիրներ: 1888 թ. օգոստոսի 28-ի նամակում՝ Պատկանյանը քննադատում է գրաճանաչության ուսուցման մեթոդը. «Գրակարգացությունը մեր մեջ չափազանց համր է հառաջանում»: Դրա պատճառը նա համարում է «...որքան լավ վարժապետի այնքան և լավ դասագրքի պակասությունը»: Երեխաները 4—5 տարի, կորցնելով աչքի լույսը անընդհատ սերտում են այբ, բեն, գիմ, դան և շատերը ձանձրանալով թողնում են ուսումնարանը: Պատկանյանին, որը 17 տարի գործել է իբրև մանկավարժ, զբաղեցրել է «հայկական գրակարգացությունը» դյուրացնելու հարցը: Նա հորինում է մի այբբենարան, որի միջոցով երեխան ավելի շուտ կարող է սովորել կարդալ (15 օրում): Այդ ձեռնարկի հաջողությունը փորձում է իր աշակերտների միջոցով և ապա ուղարկում բարեկամին՝ խնդրելով լույս ընծայել՝ տպագրության ծախքն իր վրա վերցնելով: Սունդուկյանը խոստանում է բավարարություն տալ բարեկամի խնդրանքին:

Ինչպես երևում է նամակներից, Պատկանյանը մեծ նշանակություն է տվել հայերի՝ Հայաստանում բնակվելու խնդրին, գտնելով, որ հայրենի երկրում բնակվող հայր կարող է օգտակար լինել ազգին: Որքան «վնասակառ բան է կենտրոնից հեռի աշխատել հայի համար...»: 1883 թ. նոյեմբերի 22-ի նամակում Պատկանյանը նորից անդրադառնում է այդ հարցին¹⁷: Բանաստեղծը մեծ նշանակություն է տալիս այն հանգամանքին, որ Սունդուկյանը բնակվում է «Հայոց գործունեության վառարանում»՝ Թիֆլիսում, ուր նրա հանճարը երբեք չի կարող անսնունդ մնալ: Նույն նամակում խոսելով իր «Անիի առումը»՝ դրամայի մասին, խնդրում է Սունդուկյանին դատաքննել և իր անկեղծ կարծիքը հայտնել: «Ես էլ կուզեի թատրոնի բեմից ինչ ու ինչ ասելու մեր սիրական ազգին. օգնեցեք, ուրեմն, ինձ իմ հային հասկանալի լինել», — խնդրում է նա: Պատկանյանը գտնում է, որ հեռվից դժվար է գիտենալ, թե այս կամ այն վարկյանին ինչ կարիքներ ունի ազգը: «Կարո՞ղ է ինքն իրան հարգող մարդը ապսպրանքով գործ կատարել և մանավանդ ազգային գործ, — հարց է տալիս բանաստեղծը: Պա՛րզ է, որ չի կարող»:

1880 թվի դեկտեմբերի 21-ի նամակում մի քանի խոսքով անդրադառնալով Նոր-Նախիջևանի հայկական թատրոնի գործունեությանը, Պատկանյանը գրում է. «Աղջկա պակասություն ենք զգում. տեղացի օրիորդը յուր համար նվաստություն է համարում բեմ բարձրանալն. իհարկե, ժամանակը կբանա նրա աչքերը»¹⁸: Բարեկամները անհամբեր սպասում են միմյանց նամակնե-

¹⁶ Բ. Պատկանյանի ֆ., № 270, էջ 462:

¹⁷ Նույն տեղում, էջ 449:

¹⁸ Նույն տեղում, էջ 456:

¹⁹ Նույն տեղում, էջ 439:

րին. ուրախանում՝ ստանալով դրանք և տխրում՝ ուշանալու դեպքում, նամակներ, որոնք շնչում են այնքան չերմուխյամբ, փոխադարձ հարգանքով ու մեծ հոգատարությամբ. «Իմ ազնիվ, իմ անզուգական, իմ հազվագյուտ բարեկամ Գաբրիել Սունդուկյանց...», «Սիրական Գաբրիել», «Ազնիվ եղբայր», «Սիրական եղբայր իմ Ռաֆայել», «Ազնիվ բարեկամ» — այսպիսի խոսքերով են իրար դիմում նրանք: «Զեզ տեսնողը էլ չի մոռանալ, այդ ես փորձով գիտեմ, — ասում է Պատկանյանը: «Պինդ-պինդ սեղմելով երկնային Գամառ-Քաթիպայիս ձեռքը, մնամ Զեզ հարգող, սիրող և երկար կյանք Զեզ ցանկացող՝ Գաբրիել Սունդուկյանց...»:

Պատկանյանը բարձր էր գնահատում Սունդուկյանին ոչ միայն որպես դրամատուրգի, որը փայլում է իր «գրականական քանքարով», այլև ի դեմս նրա տեսնում էր «օրինակելի նախատիպը իսկական մարդու, ազնիվ մարդու, բարի հայի, որից վեր մարդկությունը բարձրանալ չէ կարող»: Բանաստեղծը իր հիացմունքն է արտահայտում դեպի «Պեպոն», «Քանդած օջախի» և նման անմահ ստեղծագործությունների հեղինակը: Ահա ինչպես է վերջացնում նա իր նամակներից մեկը. «...սեղմում եմ քու թանկագին մատերը, որի տակից դուրս է եկել այդքան հիանալի բաներ. մնամ քանքարիդ երկրպագու...»: Մի այլ նամակում ասում է. «Զեռքդ (որն գրել է անմահ «Քանդած օջախ») սեղմում եմ պինդ-պինդ: Մնամ քեզ քնքույշ սիրով սիրող և քու քանքարիդ երկրպագու. խոնարհ Ռ. Պատկանյան...»: Նույն միտքն է արտահայտված մեկ ուրիշ նամակում. «Ի հեռաստանն գրկելով քեզ պինդ-պինդ և սեղմելով քանքարով մատերդ (որոնք անմահացրել են մտքիդ ծնունդը «Պեպոն», «Քանդած օջախ» և այլնի մեջ) մնամ քեզ միշտ քնքույշ սիրով սիրող քո Ռաֆայել Պատկանյան»:

«Հայ ուխտավորի նամակներում» խոսելով Թիֆլիսի հայ մտավորականության երախտիքների մասին, Պատկանյանը ամենամեծ ծառայությունը համարում է «ռուսահայերի մեջ հայոց գրքերի ընթերցասիրության տարածելը», դրա մեջ տեսնելով ժողովրդի ինքնաճանաչման սկիզբը: Նա գտնում է, որ հայ ժողովրդի հոգևոր սթափման մեջ իր մեծ դերն է կատարել «Թիֆլիսի հայոց գրքերի հրատարակության ընկերությունը». հանդես են եկել նոր ուժեր, նոր հեղինակներ, որոնց մեջ «ինչ ասել կուզե, որ մեր քանքարավոր Սունդուկյանը այդ կաճառի՝ ինչպես ալեգորիկ նկատորմը յուր ընկերակցաց մեջ ամենապատվական տեղը ունի յուր ինքնուրույն քանքարով և ժողովրդի սրտին ավելի մոտիկ ասացվածքի եղանակով ու ձևով»²⁰:

Փոխադարձաբար իր բարեկամի տաղանդով է հափշտակված և Սունդուկյանը: Նա խորը զգում է Պատկանյանի մեծությունը, տաղանդի ուժը: «Այս րոպեիս ստացա Զեր երրորդ բանաստեղծությունը, որով բոլորովին հափըշտակեցիք սիրտս և հոգիս», — գրում է «Ազգային երգումն» բանաստեղծությունը ստանալով:

Դրամատուրգը առանձնապես բարձր էր գնահատում բանաստեղծի երգիծանքն՝ ուղղված Նոր-Նախիջևանի հարուստների ու աղաների դեմ: Սունդուկյանի կարծիքով Պատկանյանը մի ազգային բանաստեղծ է, որը շատ և շատ անելիքներ ունի ապագայում՝ «...մեր խեղճ ազգը պայծառացնելու և հիմարներին գժվացնելու, իսկ գժերին խելոքացնելու»:

20 Ռ. Պատկանյան, «Արձագանք», 1887, № № 25, 26, 29, 37, 41:

1892 թ. օգոստոսին՝ թեև կարճ, բայց ջերմ նամակում, ուղղված Պատկանյանի որդուն՝ Հովհաննեսին, Սունդուկյանը մեծ ցավ է հայտնում իր սիրելի Ռաֆայելի հիվանդության առիթով և սրտապնդելով հարազատներին ասում, որ Հայաստանի ողջ մտավորականությունն ի սրտե ցանկանում է նրա առողջությունը:

Հուզումնալից է Պատկանյանի մահվան կապակցությամբ Սունդուկյանի ուղարկած հեռագիրը, որը հասցեագրված է ոչ թե հանգուցյալի հարազատներին, այլ իրեն՝ անմահ բանաստեղծին.

«Մնաս բարե, թանկագին բարեկամ,

Հայ ժողովուրդը աշխարհի բոլոր ծայրերում պիտի սգա քո կորուստը:

Հանգիստ քո աճյունին, մեր անմահ Գամառ-Քաթիպա. թող աստված մխիթարություն տա քո անբախտ ընտանիքին»²¹:

Այս հեռագրին հաջորդում է մեկ ուրիշը՝ 1901 թ., ուղղված նորից Ռ. Պատկանյանին, շնայած նա վաղուց արդեն չկար... Բանաստեղծը չկար, բայց ապրում էր նրա շունչը, ողին... Նոր-Նախիջևանում բացվում էր նրա արձանը և ալեգորդ դրամատուրգը, ինչպես տարիներ առաջ, դիմում էր իր բարեկամին.

«Թանկագին Ռաֆայել.

Ձեռակերտ է քո հրկրապողոտների կանգնեցրած արձանը. բայց քո ստեղծագործությամբ կերտած արձանը հավերժական է մեր և ապագա բոլոր սերունդների սրտերում»²²:

Ստեղծագործական մտերմություն

Վստահ լինելով միմյանց գրական ճաշակի վրա, Պատկանյանը և Սունդուկյանը միշտ հաղորդակից են դարձրել իրար իրենց ստեղծագործական մտահղացումները, հաճախ կարծիքներ են փոխանակել նոր երկերի վերաբերյալ: Ուղարկելով իր մի բանաստեղծությունը Սունդուկյանին, Պատկանյանը նախ շտապում է լսել բարեկամին. «...Գտեք մի քանի բոպե ժամանակ և աչքե անցրեք (ես Ձեր զարգացած ճաշակի վրա վստահ եմ)...», — գրում է նա: Բսկ ինչպիսի՞ անհամբերությամբ է նա սպասում Սունդուկյանի նոր ստեղծագործություններին: «Ի՞նչ եղավ «Ամուսիններդ», — հետաքրքրվում է բանաստեղծը: — Նախիջևանից դուրս չեկած՝ Խիֆլիսից մի անախորժ լուր ստացա. գրում են, իբր թե դու «Ամուսիններդ» (հազարավոր հանդիսականների առջև արդեն ներկայացուցած և տասնյակ բանիմաց և բարեխիղճ բարեկամից բննված) մի տգետ բախտախնդրի (ո՞վ է) խրատով փոփոխել ու աղճատել: Ես ճշմարիտ է այդ»²³: Բարեկամների նամակներից պարզվում է «Ամուսինների» ստեղծագործական պատմության²⁴ համար կարևոր մի քանի փաստեր. նախ, որ մեծ դրամատուրգը իր այդ երկը մի քանի անգամ մշակել է, և որ պիեսի նախնական տարբերակներից մեկում նա ցանկացել է զետեղել Պատկանյանի

21 Իսկականը ռուսերեն, Գ. Սունդուկյանի ֆ., № 78—2:

22 Նույն տեղում, № 77—2:

23 Ռ. Պատկանյանի ֆ., № 270, էջ 483:

24 Մենք վերեն արդեն հիշատակել ենք, որ «Ամուսինների» կերպարներից մեկը, ըստ Երևույթին Արտաշեսը, ստեղծվել է Պատկանյանի խորհրդով:

մի բանաստեղծությունը²⁵։ «Շատ և շատ շնորհակալ եմ պատկերներիդ²⁶ համար և երգի համար. պատկերներիդ միշտ կլինեն աչքիս առջև, իսկ երգդ կտպեմ «Ամուսիններում», որի 4-րդ արարվածից դեռ էլի բավական չեմ²⁷։ (Խոսքն ըստ երևույթին «Սեր և գինի» բանաստեղծության մասին է)։ «Ամուսիններս» տական ու վրա եմ արել և դեռ էլի բավական չեմ,—շարունակում է Սունդուկյանը,—հույս ունեմ, որ դու անբավական չես մնա բարեկամիդ խելքին զոռ տալուց...»²⁸։ Իսկ երբ դրամատուրգն ավարտում է երկը, շտապում է ուրախացնել իր բարեկամին. «Վերջապես հասավ օրը. ուղարկում եմ քեզ «Ամուսիններիս» (կամ աննամուսներիս, ինչպես դու ասում ես) հայտարարությունը։ Հեռագրելով չեմ հեռագրում, որ գլխավատառ չլազես, նամանավանդ հիվանդությամբ մասին այսօր կառդացի «Մշակում»²⁹։

Հայտնի է, որ 1888 թ. դեկտեմբերի 22-ին Հայոց Դրամատիկական ընկերության ակումբը ծրագրում է տոնել Գ. Սունդուկյանի գրական գործունեության 25-ամյակը, որից դրամատուրգը հրաժարվում է։ Վերջինս ուներ իր պատճառը. ցարական կառավարությունն այն ժամանակ հայ իրականության մեջ ազգային-կուլտուրական յուրաքանչյուր մի ձեռնարկում նկատում էր իբրև ցարական Ռուսաստանից անջատվելու քաղաքականության արտահայտություն։ Հոբելյանը չկայացավ, չնայած հայ հասարակայնությունը, մտավորականությունը խանդավառությամբ էին նախապատրաստվել այդ գրական տոնին։ Այդ օրը նախապատրաստվում էր նաև Սունդուկյանի «Ամուսիններ» պիեսի բեմադրությունը։

Պատկանյանն իր բարեկամի հոբելյանին նախապատրաստվում էր մեծ սիրով, ոգևորությամբ։ Պահպանվել են այդ առթիվ Շիրվանզադեի՝ նրան գրած և Պատկանյանի պատասխան նամակները³⁰։ Շիրվանզադեն տեղեկացնում է բանաստեղծին նրա «սիրեցյալ Սունդուկյանի» հոբելյանը տոնելու մասին, հույս հայտնելով, որ Պատկանյանը գոնե «հեռուստ կմասնակցի այդ տոնակատարությանը՝ իր գրչի մի արդյունքով»։ Պատկանյանը իր հերթին հետաքրքրվում է, թե ինչպես է տոնվելու հոբելյանը և ցանկություն է հայտնում նոր-նախիջեանի կողմից որպես բնծա պատկառելի դրամատուրգին՝ ուղարկել «ոսկե պսակ»։ Նա խնդրում է «Արձագանքում» տպել այն կտոր բանը, որ գրված է հոբելյանի կապակցությամբ³¹։ Հիվանդության պատճառով բանաստեղծը ի վիճակի չլինելով անձամբ շնորհավորելու իր բարեկամի հոբելյանը, հեռագրով իշխան նապոլեոն Ամատունուն (որը զբաղվում էր հոբելյանի կազմակերպման գործով), խնդրում է «Ամուսինների» բեմադրության օրը հոբելյանին լուսանկարել դափնեպսակով և ուղարկել իրեն հիշատակ։

Սունդուկյանի ստեղծագործության փայլուն բնութագիր-գնահատականը Պատկանյանը խտացրել է «Գ. Սունդուկյանցի պատկերի տակ» բանաստեղծության մեջ։

25 Ռ. Պատկանյանի ֆ., № 270, էջ 471։

26 Խոսքը Պատկանյանի լուսանկարների մասին է։

27 Սունդուկյանը Պատկանյանի բանաստեղծություններից օգտագործել է իր «Եվ այլն կամ Նոր Դիոգենես» պիեսում (2-րդ արարված, տեսիլ Գ)։

28 Գ. Սունդուկյանի ֆ., № 76—2։

29 Ընդգծումը մերն է։

30 Ռ. Պատկանյանի ֆ., № 914։ Շիրվանզադեի ֆ., № 333։

31 Խոսքը «Տալմաբլա բաներ» պիեսի մասին է, որը նվիրված է Գ. Սունդուկյանին։

«Ազգիս շարավոտ վերքը լըվանալ,
 չիրք մեծատունին անվախ ապտակել,
 Գոհարով ծածկված կեղտերը բանալ,
 Կեղծավորների դիմակը պոկել,
 Ու խեղճ կինտոյին դնել մարդու շար՝
 Այս ամենը զորեց միայն քո՝ հանճար»³²։

Պատկանյանն իր հիացմունքը «Պեպոի» նկատմամբ արտահայտել է այլ առիթներով ևս։ Մեծ բանաստեղծի այդ հիացումը՝ մեր դրամատուրգի գլուխ-գործոցով փոխանցվել է նաև նրա զավակներին։ Այսպես, իր նամակներին մեկում Պատկանյանը գրում է. «...Անմեկնելի շնորհակալ եմ «Պեպո» բանաստեղծության համար, որք մի ընդհանուր մեջ ձեռքիցս խլեցին երեխայքս և մինչ այսօր (երեկվանից դեսը) կարդում են ու լալիս են... իմ սեփական գիրքը արդեն զջլտել էին և մրոտել—ցայն աստիճան շատ էին կարդացել. նոր գրքերը ստանալով, իմ մատենադարանինը (որ Դուք էիք ինձ ընծայել) թողին, կարծելով նրանց մեջ ուրիշ և նոր բաներ գտնելու»³³։ «Պեպոն» Ռ. Պատկանյանի գնահատության մեջ խնդրի լուսաբանության տեսակետից, ուշագրավ է նաև հետևյալ փաստը։ 1880 թ. նոյեմբերի 15-ի նամակում³⁴ Ռ. Պատկանյանը տեղեկացնում է Սունդուկյանին, որ մի քանի օրից Նոր-Նախիջևանում բեմադրվելու է «Պեպոն», վերածված Նոր-Նախիջևանի բարբառի։ Ներկայացման մասին իմանում ենք «Մշակում» տպագրված Պատկանյանի հոդվածից³⁵, որտեղ նա խոսում է և՛ դերասանների խաղի, և՛ ներկայացման գործած տպավորության մասին։ Պատկանյանը բացատրում է, թե ինչու դրամատուրգիական այդ հռչակավոր երկը Նոր-Նախիջևանում հանդիպեց անհաջողության։

Սակայն Ս. Հարությունյանը Սունդուկյանին նվիրված իր արժեքավոր մեկնադրության մեջ անդրադառնալով Պատկանյանի այդ հոդվածին, մեր կարծիքով հանգում է ոչ ճիշտ եզրակացության, գրելով. «1881 թվականի նամակում³⁶ Ռ. Պատկանյանը «Պեպոն» շատ նեղ է դիտել, այնքան նեղ, որ նրա արժեքը Թբիլիսիի սահմաններից այն կողմ չի տեսնում»³⁷։ Հակառակ դրականագետի այս պնդմանը, բանաստեղծը շատ լայն է դիտում թե՛ Պեպոի, որպես կերպարի և թե՛ ամբողջ կատակերգության նշանակությունը։ Անհաջողության հիմնական պատճառներից մեկը Պատկանյանը համարում է Նոր-Նախիջևանի և Թբիլիսիի հայերի բարբերի, հայացքների և սրանց պայմանավորող սոցիալական դրության տարբերությունները։ «Պեպոն», որպիսին (դրական անձնավորություն) կա Թբիլիսում, Պեպո, որի անձնավորության շուրջը պտուտ է գալիս բոլոր խաղի իմաստը, Պեպոն, կրկնում եմ, չկա Նախիջևանի մեջ, իսկ նա, որ համապատասխան մեր տեղի դասակարգի այդ անհատին և որին մենք նախիջևանցիքս անվանում ենք տոնակիլ կամ տառիացի, մի այնպիսի վատահամբաված, արհամարհված, անհամակրելի էակ է, որի վրա օրինավոր նախիջևանցի կինը չի նայիլ անգամ, ոչ թե ցանկա թատրոնի ազնիվ

32 Ռ. Պատկանյան, Ընտիր երկեր, Երևան, 1955, էջ 212։

33 Ռ. Պատկանյանի ֆ., № 270, էջ 440։

34 Սույն տեղում, էջ 441։

35 «Մշակ», 1881, № 233, էջ 1—2։

36 Խոսքը վերահիշյալ հոդվածի մասին է։

37 Ս. Հարությունյան, Գաբրիել Սունդուկյան, 1960, Երևան, էջ 273։

բեմի վրա տեսնելու,—գրում է Պատկանյանը: Այնուհետև բանաստեղծը գրտնում է, որ նախիջևանցիների՝ հայրենի բնաշխարհից կտրված լինելը օտարացրել է նրանց հայկական ոգուն: Նախիջևանցին թեև կրոնով ու լեզվով հայ է, բայց նրա ոգին (բայց ոչ հոգին) փոխվել է. այդ ասելով ես չեմ ուզում հասկացնել, որ նա վատացել է, այլ ուզում եմ համոզել, որ, որևէ ժողովուրդ անպատուհաս չէ կարող, ինչպես երբեմն դրա հակառակն էի կարծում, սպասի ու փլավի տեղ բոլոր ու կաշա ուտել: Կրկնում եմ խոսքս՝ Պեպո չկա Նախիջևանի մեջ, և ոչ պառավ Մարիամ, և ոչ կաթոգին Անուշ, բայց շատ կան (լսեցե՛ք, լսեցե՛ք) տիկին Լիզինկաներ...»:

«Պեպո» հաջողություն չունենալու պատճառներից մեկն էլ Պատկանյանը համարում է այն Ն. Նախիջևանի բարբառի վերածված լինելը: Թվում է, թե դրանից այն պետք է շահեր, բայց ստացվել է հակառակը. նոր-Նախիջևանի բարբառի վերածված Պեպոն հնուցել էր բնագրից և զգալի չափով անհասկանալի դարձել: Թիֆլիսցի ձկնորսի համակրելի կերպարը նոր-Նախիջևանցու տարազով ու բարբառով կորցրել էր իր տիպականությունը: Պատկանյանը այն կարծիքին էր, որ «եթե «Պեպո» չթարգմանվեր, այլ հեղինակի գրած բարբառովն ներկայացվեր՝ ազդեցությունը ավելի կլիներ. վասն զի հայտնի բարբառի հետ միասին մարդս երևակայությամբ թռչում գնում է այդ բարբառը ի կիր արկանող ժողովրդի մեջ. կարձ՝ լեզուն և ոճը օգնում են կատարյալ դարձնելու անցքի, ստորագրության ազդեցությունը...»:

«Պեպո» բեմադրության կապակցությամբ մեծ բանաստեղծը առաջ է քաշում մի կարևոր հարց ևս: Նա գտնում է, որ Նախիջևանի հասարակության ճաշակը դաստիարակվել է մելոդրամաների և ազգային ողբերգությունների հիման վրա, ուր բացակայում են մարդկային հոգեբանությունն ու կյանքի ճշմարտությունները, ուր իշխում են միայն դատարկ բեմական էֆեկտները: «Մտացածին հերոսներ, հերոսուհիներ, սուտ քաջագործություններով զարդարած անձինք, դաշույն, թույն, հրացանի պայթյուն, արյուն—ահա մեր նախիջևանցիի սիրած բաները բեմի վրա»: Պատկանյանը գտնում է, որ Նախիջևանի հասարակությունը դեռ չի հասել այն բարձրության, երբ նրան հասկանալի կլինի կատակերգությունը. նա, առհասարակ, երգիծանքը տակավին չի ըմբռնում: Նախիջևանցին չէ սիրում... չէ, սխալ ասացի, նախիջևանցին վախենում է, սարսափում է կատակերգությունից. ամեն մի կատակաբանի ու երգիծաբանին ճանաչում է նա ինչպես իր անվան վատահամբավիչը, ինչպես իր ռիսերիմ թշնամի... Իմ կարծիքով Նախիջևանի բեմի վրա չպիտի ծաղկի կոմեդիան, գոնե այս մոտ ժամանակներում. իսկ առանց կոմեդիայի թատրոնը ևրբեք ժողովրդականություն չի ստանա»: Սունդուկյանն ինքը ճիշտ էր ընկալել Պատկանյանի հողվածը և ինչպես դրում է 1881 թ. դեկտեմբերի 23-ի նամակում, սիրով էր ընթերցել այս³⁸:

Ստեղծագործական ընդհանրություններ

Ռ. Պատկանյանի և Գ. Սունդուկյանի փոխհարաբերության, նրանց բարեկամության մասին խոսելիս չի կարելի կանգ չառնել նրանց ստեղծագործական ընդհանրությունների հարցի վրա, որով բացահայտվում են երկու գրող-

ների բարեկամության բուն արմատները: Այդ ընդհանրությունները մենք դիտում ենք թեմատիկայի, գրական մեթոդի (ուղղության) և աշխարհայացքի կապակցությամբ: Թեմատիկայի ընդհանրության մասին խոսելիս նկատի ունենք հատկապես ռեալիստական, երգիծական, բարբառային պատմվածքների, ֆելիետոնների, չափածո սատիրաների և պիեսների հեղինակին, Նոր-Նախիջևանի վերնախավի անխնա ձաղկող, բարեպաշտության բողի տակ ծածկվող ոճագործ ու անխղճմտանք հարուստների ու աղաների, ժողովրդի պատիժ «կոլովաների» ու «կլասնիկների», փողոցային կանանց ետևից քարշ եկող, դրամն իզուր վատնող հարուստ երիտասարդների և շատ ու շատ սրանց նման մարդկանց մտրակող Սյուլուկ-Պատկանյանին:

Երբ Պատկանյանի ստեղծագործության այս բաժինը համադրում ենք Սունդուկյանի ստեղծագործության հետ, նկատում ենք մի շարք թեմատիկ ընդհանրություններ: Սա չի նշանակում, իհարկե, որ մեկն անպայմանորեն գտնվել է մյուսի ազդեցության տակ: Մեկի ստեղծագործությունն, անշուշտ, կարող է ոգևորել մյուսին, բայց չպետք է մոռանալ, որ այդ ընդհանրությունը ստեղծողը ժամանակն էր, միջավայրը, կյանքը, տիրող կարգերը, գրողների աշխարհայացքը, ընդհանուր հետաքրքրությունները, գեղագիտական միևնույն սկզբունքները: Պատկանյանի ստեղծագործության վերը նշված բաժնում արտահայտված մտահղացումների ու գաղափարների ակունքները առկա էին դեռևս նրա 50-ական թվականների պոեզիայում: Հիշենք թեկուզ «Աղեն տա՞նն է» բանաստեղծությունը: Ազդի ազատագրության գաղափարով համակված, նրա վիճակով ու ճակատագրով ապրող տակավին երիտասարդ բանաստեղծը երկու թիֆլիսեցիների խոսակցության միջոցով կատարում է խորը սոցիալական ընդհանրացումներ: Նա նկատում է մարդկային հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալական անհավասարություններն ու հակասությունները:

«էս է հիմիկվա ադաթը—

Կուզես ջիգրից տըրաբի,

Թե քասիբ իս՝ ջուրը նընգի,

Թե խոջա իս՝ տուն մըտի»³⁹:

Գրականագետ Հրայր Մուրադյանի խոսքերով արտահայտած՝ «Պատկանյանի հերոսների մեջ ընթերցողը նշմարում է ապագա զիմզիմովներին ու պեպոներին»⁴⁰:

Երկու գրողներին հետաքրքրում էր աշխատավոր մարդու վիճակը, որ գնալով վատանում էր, հատկապես 70-ական թվականներին, երբ կապիտալիզմի առաջացմանն ու զարգացմանը զուգընթաց ավելի էին սրվում սոցիալական հակասությունները թե՛ գյուղում, թե՛ քաղաքում: Առևտրա-վաշխառական բուրժուազիան իր հետ բերում էր այլանդակ բարքեր: Մեր իրապաշտ գեղագետները չէին կարող անտարբեր մնալ այս ամենի նկատմամբ: Նրանք ցուցաբերեցին որոշակի վերաբերմունք՝ մերկացնելով կապիտալի «հերոսներին»: Սունդուկյանի Զիմզիմովի, Զամբախովի, Օսկան Պետրովիչի, Փարսիդի և շատ ու շատ սրանց նմանների շարքերն են լրացնում Պատկանյանի Փորսուղին Ավագը, Թոռմազ աղան, տիրացու Մկրտիչը, Մայասուլին Բվանուշը,

39 Ռ. Պատկանյան, Երկեր, 1955, էջ 62—63:

40 Հ. Մուրադյան, Ռափայիկ Պատկանյան, 1956, էջ 51:

աղա Թերիմովը, իսկ կյանքի անարդարությունների մասին «փիքը անող» աղանիվ Պեպոն ձայնակցում է ջրկիր Մարտիրոսը:

Թե՛ «Քանդած օջախի» և թե՛ «Պաց աղպարի» դրական հերոսները՝ զիմ Մոգին և Հոռոմսիմա ճիճան աշխատավոր դասակարգի նկրկայացուցիչներն են՝ ազնիվ, շիտակ մարդիկ: Կյանքի դառնություններից նրանց մեծ բաժին է հասել և դա օգնել է՝ ավելի լավ ճանաչելու իրականությունը: Նրանց միջոցով հեղինակները իրենց քննադատական խոսքն են ուղղում փարսիղներին և իվանուշներին. դա աշխատավոր մարդու բողոքն է իրենց կեղծիքների դեմ: Պատահական չէ, որ Պատկանյանն այնքան բարձր է դնահատել Սունդուկյանի «Քանդած օջախը»՝ որակելով այն «անմահ» մակդիրով:

Բուրժուական հասարակարգում բավականին ծանր դործ է աղջկա ամուսնությունը: Աղջկա ծնողները ձգտում են հարուստ փեսա ունենալ, երիտասարդը՝ հարուստ օժիտով, ղեղեցիկ կին, աղջիկը՝ հարուստ, լավ փեսացու և այս խառնաշփոթում, իհարկե, հետին պլան են մղվում մարդկային լավագույն զգացումները, իրենց տեղը ղիջելով փողի, հարստության կուռքին և խարեությունը: Իսկապես, «աղջիկ մարդու տալը մի փեշակ» է դառնում. այս առումով Սունդուկյանի «Խաթալալախ» կողքին կարելի է հիշել Պատկանյանի «Վարդերը», «Տայմաբվա բաները»:

Ինչպես Սունդուկյանը, այնպես էլ Պատկանյանը սուր երդիծանքով խաբանել են օտարամոլությունը, եվրոպական կեղծ քաղաքակրթությունը, մոդաներին կապկորեն հետևելը, որն ապականում էր երիտասարդությունը, փչացնելով նրա մեջ ամեն լավն ու ղեղեցիկը: Հեղինակների տաղնապն ուներ խորը հիմքեր: Երեք բռնակալ տերությունների միջև բաժանված, բռնի ասիմիլյացիայի ենթարկվող հայ ժողովրդի համար ոչ նվազ կորստաբեր կարող էր լինել եվրոպական քաղաքակրթության ազդեցությունը՝ իր ազդային դեմքը պահպանելու տեսակետից: Այդ երևույթի դեմ պայքարը հայ դրոշմների համար ուներ առաջնակարգ նշանակություն:

Պատկանյանը և Սունդուկյանը մեծ սիրով ու կարեկցանքով են պատկերել բուրժուական հասարակարգի զոհերին՝ աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչներին, որոնց վիճակված է ըմպել կյանքի դառնության բաժակը: Պատկանյանի «Զախուն», Սունդուկյանի «Պեպոն» և «Վարինկի վեշերը» սյուժետային բոլորովին տարբեր կառուցվածք և բովանդակություն ունեցող, տարբեր միջավայրեր արտացոլող ստեղծագործություններ են, որոնց, սակայն, միացնում է միևնույն դադափարը՝ հումանիստական վերաբերմունքը դեպի զրկվող ու անիրավիք մարդը: Զրկիր Մարտիրոս, Պեպո, Մակակո... Երեքն էլ աշխատավոր խավերի ծնունդ, օժտված մարդկային ամենաբարձր հատկություններով, ազնիվ ու համակրելի: Նրանք բողոքում են անարդար աշխարհի դեմ, ուր ոտնակոխ են արվում աշխատավոր մարդու իրավունքները և ամեն ինչից վեր դասվում փողի ուժն ու իշխանությունը:

Խոսելով երկու դրոշմների ուսուցիչի մասին, չենք կարող չշեշտել նրանց կերպավորման, տիպականացման արվեստի մեծ ուժը, որի շնորհիվ նրանք կարողացել են ստեղծել՝ «տիպական հանդամանքների մեջ տիպական խառակտներն»:

Հեղինակների ուսուցիչի կարևոր առանձնահատկությունն է նաև բարբառի օգտագործումը, որին նրանք շատ լավ են տիրապետում: Բարբառով են պրկված Սունդուկյանի համարյա ողջ ստեղծագործությունը, իսկ Պատկանյանի՝

Նոր-Նախիջևանի կյանքը պատկերող դործերը: Ժողովրդի լեզվի օգտագործումը ինքնանպատակ չէր: Այն օգնում էր ավելի հարազատորեն վերարտադրելու պատկերվող միջավայրը: Հիշենք Պատկանյանի՝ «Պեպոն» Նոր-Նախիջևանում բեմադրելու մասին դրած հոգվածի այն տողերը, ուր խոսում է բարբառի օգտագործման նշանակության մասին. «...Բարբառի հետ միասին մարդս երևակայությամբ թռչում գնում է այդ բարբառը ի կիր արկանող ժողովրդի մեջ. կարճ՝ լեզուն և ոճը օգնում են կատարյալ դարձնելու անցքի ստորագրության ազդեցությունը»:

Սունդուկյանի և Պատկանյանի ստեղծագործական մեթոդի ընդհանրությունների մասին խոսելիս չենք կարող առանձնապես չշեշտել նրանց երդիծանքը:

Երդիծարանությունը հայ գրականության մեջ զարգացում ապրեց հատկապես 19-րդ դարի 2-րդ կեսին, կոչված լինելով մերկացնելու բուրժուական այլասերող բարքերը և պայքարելու դրանց դեմ: Պոլսահայ իրականության արատները ծաղրող, ազգային ջոջերին մտրակող Հ. Պարոնյանին ձայնակցում էին ժամանակի հայ գրականության խոշորագույն երդիծարանները՝ Բ. Սունդուկյանը և Ռ. Պատկանյանը:

Երդիծանքը Պատկանյանի և Սունդուկյանի ստեղծագործություններում հաճախ հասնում է այնպիսի սրության, սոցիալական այնպիսի ուժեղ հրանդ է ստանում, որ ականքն է դառնում տիրող կարգերը բացասելու հեղինակների միտումը:

Երկու հեղինակների ստեղծագործական կապերի և աշխարհայացքային հարցերում ուշադրալ է «Պեպոն» հեղինակի՝ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ ունեցած դիրքը: Անկասկած Սունդուկյանին խորապես հուզել է հայ ժողովրդի քաղաքական ազատության խնդիրը: Դրա ապացույցներից մեկը նրան ուղարկված Պատկանյանի նամակն է՝ «Սրտի վկայություն» բանաստեղծության հետ⁴¹:

Չէ, չէ, երգած չէ դեռ Մայր Հայաստան
Կարապի երգը, երգն յուր տխրագին.
Այն որ լսեցիք՝ այն երգ էր դարնան,
Ավետյաց երգ էր հայոց սոխակի...

Ինչպես վերը նշեցինք, այս բանաստեղծությունը երկու բարեկամների ջերմ, մտերիմ դուրսի արդյունք է, երկու մտերիմ սրտերի վկայությունը: Նա դիտել, որ Սունդուկյանի սրտին մոտ է ազգային հարցը և նվիրում է նրան այնպիսի բանաստեղծություններ, ինչպիսիք՝ «Մեր օրերու հայ բանաստեղծը» կամ «Արզրումի սոխակ»:

Դեպ Կարին, հայ եղբայր,
Մինչ կորած չէ իսպառ,
Արտորանք դեպ Կարին—
Ազատել հայերին:

Այս տրամադրությունն արտահայտվել է նաև Սունդուկյանի ստեղծագործության մեջ: Հիշենք նրա «Ամուսիններ» պիեսը: Ի՞նչ է ասում նրա հե-

⁴¹ Ռ. Պատկանյանի ֆ., № 277, էջ 464:

րոսը՝ Արտաշես Արամյանը. «...Ես ձգեցի ամեն ինչ և անմիջապես մտա զինվորական ծառայության... Դու երևակայել անգամ չես կարող, թե ինչ զգացմունք է տիրապետում քեզ պատերազմի դաշտում, երբ հանկարծ ղիմացդ կանգնած ես տեսնում... դարավոր թշնամուդ, որ հափշտակել է քո հայրենի երկիրը, որի համար քո պապերն ու նախնիքը իրանց քրտինքը ու արյունն են թափել, ուր ամեն մի քար, ամեն մի ավերակ պատմում է քեզ անցյալի փառքը... Օ՜հ, այն ժամանակ, Լևոն, բոլորը մոռացվում է, բոլորը, և ամբողջ գոյությունդ միայն մի տենչով, մի ցանկությամբ է համակվում՝ կամ մահ, կամ կյանքիդ հետ քո հայրենի երկիրը...»։ Ազատ ու անկախ Հայաստանի հարցը զբաղեցնում է հեղինակի հայացքն արտահայտող հերոսներից մեկին⁴³։ Արտաշեսը հոգով ու մտքով իր արևմտահայ եղբայրակիցների հետ է, որոնք սոսկալի վիճակումն են։ «Պատիվ, կյանք, կայք, ընտանիք, ոչինչ, ոչինչ ապահով բան չունին այն թշվառները»,—ասում է նա ընկերոջը։

Իր հայրենիքի՝ «վաթանի» ազատագրությունը հղել է Սունդուկյանի նվիրական իղձը, որ արտահայտել է նա նաև իր սրտառույշ «կտակում»⁴⁴. «Մնաս բարով սիրելի ու պաշտելի ասկ. աստուծ վաթանիդ արժանի անեն»։

Առաջ բերված փաստերը պատկերացում են տալիս այն մասին, թե հաջորակաբար ինչպե՞ս է զգացվում ինքնագործունեության արժանի մտերմությունը որքան արդյունավետ և բեղմնավոր է հղել երկուստեք։

А. Абемян

ЛИТЕРАТУРНОЕ СОДРУЖЕСТВО Р. ПАТКАНЯНА И Г. СУНДУКЯНА

(Р е з ю м е)

Статья посвящена дружбе двух великих армянских писателей Р. Патканяна и Г. Сундукяна. Для выяснения их творческого содружества, личных взаимоотношений, автор статьи использует множество фактов—письма, телеграммы, посвящения, автографы, а также материалы, свидетельствующие об их встречах и беседах.

Живя в разных городах, писатели были неразрывно связаны. Они сообщали друг другу о своих дальнейших творческих замыслах и обменивались мнениями.

В статье рассматривается вопрос творческой общности двух писателей, чем и объясняется их литературное содружество.

Эта общность, обусловленная временем, средой, жизнью, взглядами Р. Патканяна и Г. Сундукяна, общими интересами, эстетической последовательностью, рассматривается в связи с тематикой, литературным методом и мировоззрением писателей.

⁴² Հիշենք, որ այս կերպարը Սունդուկյանը ստեղծել է Պատկանյանի հետ ունեցած զրույցից հետո, նրա խորհրդով, թեև պիեսի հիմնական կոնֆլիկտը տեղի է ունենում ցարական բարձրաստիճան հալաղգի շինվելի և դուրացիությանն ազատագրելու նպատակով գյուղ գնացող նարոդնիկական-լուսավորական երիտասարդ մտավորականների միջև։

⁴³ Գ. Սունդուկյան, Իմ մահն ու թաղումը։